

ՔԱՎԱՆՈՒՄԻ ԳՐԱՐԱՆԻ ԻՒՆԻ

Պոչխարիոյ համար	12
Տարեկան	3 Ժր.
Վեցամսեայ	6 "
Սրբապատկանի	
համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Անկրիկայի համար	
Տարեկան	3 ցր.
Վեցամսեայ	4.50 "

Մանկանց համար տարեկան 10 ս. 1/2 ամսական համար 20 ամսական հ. երեք ամսական անգլիական համար 20 0/0 զեղյ կրոյ լայ :

Վառձայի համար ձեռքի 10 ամսական

ՃԱՌԹՈՒՄ

ՄԱՐԿԻ ԱՅՈՒՆ. ԲԱՂՄԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԻՏԻՆԱՆԻ ԶՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ քրտն դրոյն հարգութեամբ հասցնելն

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Սրբապատկանի համար ձեռքի

(20 ՄԵՆԹԻՄ)

Պոչխարիոյ համար ձեռքի

(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չեն տրուիր

ՔԱՎԱՆՈՒՄ Ի ԲԱՎԱՆՈՐԻ ԳՐԱՐԱՆԻ ԲԱՎԱՆՈՐԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱՌՈՂԻՎՈՍԻ Դ Ի Մ Ո Ւ Մ Ը

(Պատգամաւորներու միջոցով ֆրանսայի նախագահ Լուպէին յանձնած այս գիծումը հրատարակուած է «Գործակալի» մէջ գրաբար լեզուով, մենք այլապէս հարաւոր կը հրատարակենք ժողովրդեան լաւ ըմբռնել տալու համար Հայրիկին ըսածնէրը):

Նորին Բարձրագոյնութեան Պարոն Նախագահին -Պարոն- սայի Հանրապետութեան :

Արեւիկեան հնարարեան եկեղեցիներէն մին որ բոլոր եկեղեցիներէն նախահասարակագոյն արեւելքին մէջ ու դարերու եւ ժամանակաշրջաններու մէջ իր մեծագործ թագաւորներով եւ հեղինակաւոր հայրապետներով կառուցուածն ու մահակապետութեան դէմ կռուողն, իր անկախութիւնը կորցնելէ յետոյ իսկ, մեծափայլով վաճառականութեան համար արեւելքին դուռները բացաւ Հնդկաստանէն մինչեւ Ամսթերտամ, ինչպէս եւ ժողովուրդը որ առաքելներու դարի սկիզբներէն ընդունեց իր կրօնը, զայն անկարող պահեց, պահեց իր լեզուն զոր կարծես աստուածային հրաշքով մը ընդունեց, մինչեւ այս մնաց իր հարազատ դաւանութեանը մէջ, հաւատարիմ եղաւ տիրող պետութեանց, եւ, որչափ պայմաններ կը ներկային, խաղաղ հետեւող իր զարգացման, ուսումի, արեւմտեան, երկրագործութեան, վաճառականութեան, եւ զաւտարիմ իր տիրող պետութեան պետական ծառայութեանը մէջ, այսօր, ազատութեան եւ իրաւաստութեան 20րդ դարու սեփն վրայ, ծայրայեղ յուսանատ վիճակի մը մէջ կը գտնուի ու իմ ձեռքով եւ տկար ձայնիս միջոցով, որ տարաբար հովիւն եմ այդ շարասանը հոսին, իր խոնարհ աղերսը կը սատարեմք ձեր Բարձրագոյնութեան Աստուծոյն ինդրելով ազատ ֆրանսայի միջամտութեան զօրաւոր ձայնը հանդէպ իր չափազանց թշուառ ժողովուրդին Օսմանեան պետութեան հայկական նահանգներուն մէջ :

Ֆրանսական հանրապետութեան յիշատակարանները անուր չեն հայ ազգին բողոքի ձայնին հանդէպ իր ներկայից, թուրքոյ սահմաններուն մէջ, որոնք են վայրագ քրդե-

րը, սաճիկները եւ չէրքէզները, ու ան առաջին անգամ հնչող լուսաւոր երգիչի դանդաղեան աւջեւ 1878 թւին, Բեռլինի վեհաժողովին զուարճան առնելու ներկայ խնդրող, այն առնել, իրբեւ մեծ արքայազնուհի, Պոլսոյ նախկին պարսիք օսմանեան պետութեան դէմ առաջին բողոքող, գիտակ ընդունեցութեան, հարստահարութեանց ու բռնաբարութեանց պարտեցաւ երապիտ մէջ, այցելելով Գերմանիոյ եւ Աւստրիոյ կայսրութիւնները, Իտալիոյ թագաւորութիւնը, ինչպէս իմ ընկերակիցս, արքայազնուհի Սորեն Նարպէյը այցելեց մեծն Ռուսիոյ ազատարար կայսր Ալեքսանտր Բ.ին, որի պատճառով եւ վեհաժողովը Հայկական խնդիրը արդարացի գտնելով դաշնագրութեան մէջ մտցուց ՅԼԻՔ յօդուածը :

Տէր նախագահ, Չամ համարձակիր Ձեր Բարձրագոյնութիւնը ծանօթացնել իր յարաբանութեամբ, բայց չեմ ալ կրնար ծածկել իրականութիւնը՝ թէ քառօրեղ դարի ընթացքին մէջ խաղաղ հայ ազգարնակչութեան վիճակը թեթեւալու փոխարէն աւելի եւս ծանրացաւ ու դժուարացաւ, Դանիացաւ նոր-նոր հարկերով, դժուարացաւ անթիւ բանտարկութիւններով եւ աքսորումներով, ճնշուեցաւ խիստ տանջանքներով, վատթարացաւ մեծազորեղ պաշտակաւորութիւններով, սպառեցաւ համազգային կոտորածներով, նուազեցաւ անթիւ կրօնափոխութիւններով, մաշեցաւ անթիւ բաւարարութիւններով : Ձը խնայուեցան մանուկներն ու պատանիները : Խուլեցաւ կոյսերու պարկեշտութիւնը, երկիրը ներկուեցաւ բազմաթիւ ծերերով, անթիւ արեւմտեան զաստները, մաշեցան սրբանուէր կրօնաւորներու կաշիները, աւերուեցան ու յափշտակուեցան անմեղ ժողովուրդին բազմամեայ վտասակներն ու հարստութիւնը, իսպառ ցամաքեցաւ ժողովուրդին կեանքն ու կենդանութիւնը եւ ան հիմայ չոր ու ցամաք կ'մայր մըն է :

Ու աղէտալին ան է որ, չի բաւեցին 1895-96 վերջը տեւող կոտորածները, որ տեղի ունեցան պաշտօնէից, սահմարձարկ քրդերու եւ չէրքէզներու ձեռքովը, այսօր ալ նոյն ստակայի կոտորածներու կազութիւնը կը արիւն Սասնոյ, Մուշի սահմաններուն եւ Պիթլիքի նահանգին մէջ եւ որ աւուր կը սպառնայ ծաւալ ստանալ ու տարածուիլ հայկական բոլոր գաւառներուն մէջ :

Ձերը Բարձրագոյնութիւն Իրբեւ զլուիս Հայաստանի առաքելական եւ ընդհանրական եկեղեցւոյ եւ իրբեւ աշխարհիս ամէն կողմերը գտնուող փոքրամիտ հայ ժողովրդին հոգեւոր հայրը, զաւակներուս բաղդաւորութեանը ուրախակից եւ տառապանքներուն սգակից, անտանելի գտնելով թուրքոյ մէջ գրաւուող հօտիս կացութիւնը, իրբեւ վիճակը ճշգրտութեամբ եւ ճշմարտութեամբ պարզել յետոյ, այս թղթովս եւ աղաչական ձայնով, ու թուենիք տարիներու ծանրութեան ընդ վերաս, կուգամ աղաչելով աղաչելու Ձեր վեհաձեռն ողորմածութիւնը, որ բարձրացնէք Մեծ եւ Մարդասէր Փրանսայի պաշտպանողական հզօր ու ազատարար ձայնը ի պաշտպանութիւն եւ բարօրութիւն անմեղ հօտիս, որ կը գտնուի մահմետական լուծին սակ :

Ոչ հայոց Արշակունի թագաւորներուն իսգք կը փնտոնեմ, ոչ Բագրատունիներուն քայսուրը կորոնեմ եւ ոչ Վրացիներուն անուանաւոր խաչին բարձրագոյն կուգեմ, այլ շատ համեստարար կողաչեմ որ թեթեւցուն մերկայցած ժողովրդի հարկերուն ծանրութիւնը, վաճառականները եւ ուրիշ զատակալներուն պատկանողները ազատ երթնենք ներքին նահանգներուն եւ արտասահմանին մէջ, զաղթակ'ններն ու պանդուխտները վերադառնան իրենց հայրենիքը, ու անոնց գրաւուած կարւածները իրենց վերադարձին, բանտարկեալները ներսին, իրաւունքներու ազատ պաշտպանում ըլլայ եւ անիրաւութեանց դէմ ազատ բողոքում, հայերուն ինքնապաշտպանութեան իրաւունք արուի քրդերուն, չէրքէզներուն եւ մոլոնանդ մահմետականներուն դէմ եւ վարչութեանց վրայ վերահսկենք իրատեսիլայ պետութիւնները :

Իմ այս խոնարհ աղերս Ձեր պետութեան ատեանի առջեւ հասցնելու համար ներքակներ կարգած եմ իմ արժանաւոր եպիսկոպոսներէս երկուսը՝ Յովսէփ եպիսկոպոս Սարաճեանը, արքեպիսկոպոս Ամսրիկայի հայոցը եւ Սահակ եպիսկոպոս Այվատեանը արքեպիսկոպոս Պարսկահնդկաստանի հայոց :

Յուսալով կը յուսամ Տէր նախագահ, ինչ խնդիրս Ձեր մարդասիրութեան առջեւ լելի ըլլայ, մեծ պետութեան պաշտպանութեան ու միջնորդութեան շնորհիւ իմ տառապեալ հօտս փոքր ինչ ապահովութիւն եւ խաղաղութիւն պիտի գտնայ որու

համար եւ կը մեծ առ յաւէտ շնորհակալ ու յոյժ աղօթարար Ձեր կեանքին համար :

(Ստրասբուրգ)
Կաթողիկոս Ամենայն Հայոց
ՄԿՐՏԻՉ Ա.
(Կնիք Հայրապետական)

ԲԱՅԱՌԻԿ ԵՐԵՒՈՅՑ

Ժողովուրդներու կեանքի մէջ յառաջ գիծական, ծայրագոյն և ներկայի պայմաններին բոլորովին հակասակ տրամադրութիւն ունեցող տարրի ու ժողովրդեան պաշտօնական գլուխ, այն էլ հոգեւոր գլուխ համարվածների մէջ ներկայանալու իրենցը ներկան կերպարանափոխելու համար շատ հազաւորէպէ :

Այդպիսի հազաւորէպէ երեւոյթ այսօր տեղի է ունենում հայ կեանքում :

Այդ երեւոյթը մեզ պատկերացնում է ամենայն հայոց կաթողիկոսի նախագահ Լուսէին ուղղած գրութիւնը, որի աշխարհաբար թարգմանութիւնը այսօրվան համարով տալիս ենք մեր ընթերցողներին :

Հայոց կաթողիկոսը իր 85 ամեայ փորձառութիւնով զինված, երիտասարդական ցնորքներէց ու եռանդից վաղուց ձեռք բաշած, իր հայրապետական գահից պաշտօնապէս նոյն պոյններով է նկարագրում հայ ժողովրդի վիճակը ծածկաստանում, նոյն մանրամասնութիւններու մէջ է մըտնում, ինչ ձեռով որ այդ կատարվում է յեղափոխական, մեր ջոջ աղաներից ու խելացի գաւթնաներից արհամարհված անխոհեմ օրգանների ու թերթերի մէջ :

Այդ անտանելի կացութեան վերջ գնելու համար մերոսի կաթողիկոսը նոյն պահանջներն է դնում, ինչ որ դնում են Սասունի բարձունքներում գէն ի ձեռին կուող Հրայրճեան ու Անդրաշիկները, որից և պարզվում է, թէ ժողովրդային մեծ ցաւերը ըմբռնողները որչափ էլ տարբեր

հասակի լինեն — իրանց պահանջներով հանդիպում են իրար և գրկախառնվելով ստեղծում են ազգային միությունը...

Մենք կարծում ենք թէ՛ այլևս միութեան իմաստակ փաստաբաններին խօսելու հիմք չէ մնում...

ՎԱՐԴՈ

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՆԻՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

ԺԶ.

Ջախջախիչ իրականություն մըն աչ

Ու՞ր տարուան սեռերը թեան միջոցին թշնամիին, Սասունցիին և Յեղափոխականին մէջ տիրող իրականութեան կենդանի փաստերով ես փորձեցի ցոյց տալ յեղափոխութեան թշնամիներուն և Սուլթանի փաստաբաններուն տեղը:

Չուզեցի զրկել ատ վատերը նոյնիսկ իրենց ամենէն ուժով փաստին պատճառած միութարութեանն, և տեսանք թէ՛ Սուլթանի դիւանատուններէն ելած «վաւերաթուղթերը» յաղթականորէն հայ ժողովուրդին ներկայացնելով հայ — համախառնները ինչ ոճագործ գերի մէջ էին:

Թշնամիին և մեր ցեղերու ատ գիրկընդիպանումը, թշնամիին և հայ Ռիւսուսները պաշտպանելու գիծակով բարձրացած «Ջայն»երուն միացման դժոխսային գործը — յեղափոխութիւնը քանդելու և զատապարտելու համար — արդէն ատ վատերու գերեզմանն է որ կը փորէ և կարծեմ նոր բացատրութիւններու, նոր փաստերու պէտք չէր թողոր:

Բայց դեռ կան կէտեր, դեռ կան իրականութիւններ, դեռ կան ատ վատերու բերնէն ելած խօսքեր, որոնք կարծէ որ հետաքրքիրներու պարզութիւն:

Եւ աս անգամ ես կանգ կառնեմ իրականութեան մը տեղը: Կովկասահայ շարժումներն է ատ իրականութիւնը:

Տարի մը առաջ մենք ականատես եղանք ժողովրդական բողոքի մը պոսթիկովին և արիւններու, որոնց առջեւ՝ «Պայք Ալիի ցոյց» ջատագովներուն ձայներին քաշել և տեղերին նստել կը մնայ:

Չենք կրնար չի խստովանել, որ Կովկասահայ շարժումները հայուն քաշած տառապանքին հարիւրէն մէկն ալ չէր կրած: Անոր աչքին առջեւ չի պղծուեցան իր մայրն ու քոյրը, նոր առջեւ չի մորթուեցան իր ճիւղերը:

Եւ ինչու կարիճները անոր աչքին առջեւ տալքը ցիցերը չի հանուեցան, անոր աչքին առջեւ մայրերու փորձը չի ճեղքուեցան, ժողովուրդը չի թախուեցաւ... Տառապանները չի գոցուեցան, ժողովուրդը չի անհետացաւ: Երբ կարգը կարելի է երկարել:

Բայց Կովկասահայ պոսթիկաց, բողոքից և կուրիւն ելաւ: Ինչու:

Մեծ Արջը խլաց անոր ձեռքէն իր վարժարանը — որ շատոնց խուլած և իր նշանակութեանն զուրկ էր թուրքիոյ հայերուն մէջ: Մեծ Արջը խլաց անոր եկեղեցիին իրաւունքները — որ շատոնց խուլած, պղծուած էր թուրքիոյ մէջ և մենք լուծ ենք: Կովկասահայ բողոքից սակայն, որովհետեւ ատ միտեմաթիք պրաւուներն ու զրկուեցան արագայ մեծ աղէտներու կարապետն էին:

Եւ հայաստանցի հայք ատ փոխերն անցած է լուս և Մեծ Աղէտին մէջն է որ կապրեմ... Ինչ էր սակայն Կովկասահայ շարժումներուն հանդէպ մեր հակառակափոխականներուն դիրքը, ինչ էր Սասունի գոթազգութիւնները Սուլթանին խոյր և հայ յեղափոխականին վզին բեռնող վատերու դիրքը այն ատեն, ինչ էր, վերջապէս, արաստանների ամբողջ հայ գոթութիւնը զգալու, զատելու կերպը այն ատեն:

Թարմ իրողութիւնները կրկնելու պէտք կ'այ:

Սկսած ամենէն պահպանողական հարուստէն մինչեւ ամենէն թրքացած ներկայ վատերը չէին որ ոգուորութեան վեր-վեր կը թռչէին և բողոքի ձայններին կը սիւսնէին անոնցիւնին հետ:

Դեռ աւելին կ'այ:

Նոյն այդ մարդիկը չէին որ սկիզբէն ինքնուրուի արտայայտութիւններով հրապարակը կողոզէին, երբ այսօրուան հայկուսած Դաշնակցականներուն գնդակներն ու զայրուները կը մտուէին Գաղիցիներու, Անտրիպներու, Բոգոսլավիկներու կողմ:

Անէճքներու, հայկոյանքներու, ցեխերու այն աղտոտ կոյտերը՝ որոնք այսօր վատարար յեղափոխութեան և յեղափոխականին հասցէին կը շարունակէին, ինչու հոտ ալ երեսան չէկան, ինչու է, ինչու է:

Թուրքիայի մէջ հայ կիւրը կը լը կուի և երբ յեղափոխականին զաշոյնը կը հասնի թուրքին — Աման մեռանք, կորանք, թուրքը պիտի գողգողէր պայղուշութիւններն են որ երեսան կը հանուին:

Կովկասի մէջ ճնշող Անտրեվ մը կը զարնուի — «Ս' աղէկ ըրին, կ'իցնենք» թի ազաղակն է որ կը փրթի:

Ինչու՞ ըստատրի սա վատութիւնը: Որո՞նք հանդէպ կարելի է համբերել — եթէ ներելի է համբերել բոտր գործածել — քոյրերին լլկուած, տը զաքնիս ցիցը հանուած և ամբողջ ազգ մը արիւններուն մէջ թախի: Խուսած ատեն, թէ՛ մեր այս կամ այն գոյքը գողցուած ատեն:

Եւ երբ մենք հոգիի ամբողջ ուժով կը բազանք Գաղիցիներու ոչնչացումին և հիացումներով կը լեցնենք հրապարակը — որոնց հասցուցած շարժը վերջին տեսակին կը վերաբերի դեռ — Համախառն ինչ անուրի ոճագործութիւններն է հայա մեր վատերուն բրածը, որոնք լլկուած քոյրերուն, մորթուած կարիճներու վրէժին և հայրենիքի ազատութեան նուիրուած կը հայտնուեն, կը գտապարտեն... Վատերու հակասութիւնը դեռ ասքանով չի վերջանար: Իրենք այ գիտեն իրենց ոճագործ գերին գոթազգութիւն և անուրի կողմերը և միշտ յարմար առիթը կը սպասեն ազգագու արաւանքները սարգելու համար: Ատաքելոյ վանքի գրաւման պահուն տեղի ունեցած երբոյ՞ թը, Սասունի կուրիւններուն շուրջն ալ պատանեցաւ:

Ժին և հայրենիքի ազատութեան նուիրուած կուրիւններուն կը հայտնուեն, կը գտապարտեն... Վատերու հակասութիւնը դեռ ասքանով չի վերջանար:

Իրենք այ գիտեն իրենց ոճագործ գերին գոթապարտելի և անուրի կողմերը և միշտ յարմար առիթը կը սպասեն ազգագու արաւանքները սարգելու համար:

Ատաքելոյ վանքի գրաւման պահուն տեղի ունեցած երբոյ՞ թը, Սասունի կուրիւններուն շուրջն ալ պատանեցաւ:

Մարդ երբ այսինչ կամ այնինչ գործին սկզբունքով հակառակ է, պէտք չէ՞ որ ատ գործին ձեռնարկուած վայրկեանին իսկ, ատանց ըստպատելու գործին յաջող կամ ձախող ելքին, յայտնէ իր հակառակ կարծիքը:

Այդպէս շըրին սակայն մեր վատերը Սասունի կուրիւններուն նկատմամբ, ինչպէս որ Ատաքելոյ վանքի գրաւման անգին արաստանների հայ գաղութը իր «ամբողջ» և վատերով մէկտեղ կը հիանային ու կողերուէին, որովհետեւ կոտորած չէր դաւ, այնպէս ալ, երբ Սասունի կուրիւններուն, պաշարումներուն խուլ արձագանքն էր որ կը հասնէր, մեր վատերը գլուխներն ներս քաշած էին, ժողովուրդին «յուսահատ» տարրը վահաններու, Հրայրներու, Անդրանիկներու անուշովը կ'ոգեւորուէր և կը հետաքրքրուէր:

Ինչ կ'այ այսօր, ինչ լուր ելաւ Սասունէն, Անդրանիկէն, նոր յաջողութիւն բան մը կ'այ:

Աս էր ամենուր բերնին մէջ:

Բայց երբ կոտորածներու գուժը հասաւ, վայրկեանապէս ոգեւորուողները վայրկեանապէս ամբեցան, ալ ամեն քաշուցիւն, սո՛ւն արժանիք մոռցուեցաւ, և վատերը կոտորածէն ետքը գլուխներն իրենց շնթոկոցէն դուրս հանեցին և սկսան ունալ ու վայել... Ապահով ենք, որ եթէ Անդրանիկներն ու Հրայրները յաղթական ենէին կուրիւն գուրս, ոչ ոք, ոչ մէկ հակառակափոխական, ոչ մէկ յուսահատ, պիտի չի կոկուար թէ՛ — «կուրիւն պատճառը յեղափոխականները եղան», ոչ մէկ հայ-դիւանագէտ պատգամ պիտի չորոտար որ — «հիմա կուրիւ հանելու ատենը չէր, ոչ ոք չի պիտի վայել թէ՛ — կոտորածներու պատճառ պիտի ըլլան»:

Եւ հայ-թուրքերու կողմէ կուրիւններու երեսին վատարար նստուած անզգամ, «ճարագործ», «ազգասպան» մակդիրները ինչ պակներու պիտի փոխուէին... Եւ աս անկեղծութիւնն է, որ խոշոր գերիով մեր առջեւ կը հանեն և օրը տասն անգամ անոր անուշով կ'երդմուն Սուլթանի հատարարի փաստաբանները:

Մենք կը թքենք ու կ'անցնինք ատ անկեղծութեան վրայ: Ու դեռ պիտի տեսնենք «անկեղծութեան» շարքեր: Ժիրայր

Միւրապէ

Յիւրապէ ԹԱՂԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՏԱՐՈՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ

Միւրապէ և շարժումների մէջ նստուած ինչ և թշուառութիւնը կը սպասուայ թուրքին ետևողա-

նէն հազիւ ճողպարած մեր խեղճ հարազատները ոչնչացնելու, առջին, Յիւրապէի իրազականազանքը, չեմ գիտեր քանի ամիսէ ի վեր իրար են անցեր անկեղծեցի ներկելու խնդրով մը, և անգամ մը իրիցը չեն ընել անգին, Հաստատան, նայելու:

Մինակ անտարբերութիւնը և յիմար գործերով զբաղելնին չէ որ զիս կը հարկադրէ գրիչ ձեռք առնել: Նեւ ինչ կ'այ:

Ամէն հայ գիտէ որ ուրիշ քաղաքներու թաղականութիւններուն Պատրիարքարանէն օգնութեան կոչեր եկած է, և ինչպէս կը լսեմ, արդէն մէկ-երկու քաղաք ատ նպատակով հանգանակութեան ձեռնարկուեցէ:

Անկարելի է որ Յիւրապէի մեր թաղականութեան ալ եկած չըլլայ ատ կոչէն: Բայց որպէս պիտի կեցնուի ներկելու անմտութիւնը չի վիժի, «կոչը» «իմանք» ալ թէ՛ եղած ըլլալու է և քանի օրէ ի վեր անկեղծեցի ներկելու համար հանգանակութիւն կը լսեմ թաղականութիւնը, որպէս որ «ճարագործ» պործով անկեղծեցի ներկելու չի քննարկ:

Դատեցէք:

Երբ կը գրենք, կը լսենք որ մեր աղաքները կը վշտանան եղբր, չի գրենք խղճներնիս կը բողոքել: Եւ քեզի համար Հայաստանցիին և խղճիս ձայնը չա՞տ, իրիստոնշանակութիւն ունի, քան թէ Յիւրապէի թաղական օղաներուն վշտանալը, որոնք «ազգային գործը» ինքնակոչ կ'արգով «կուրիւ» են ըրեր և գոնէ լաւ գործ մը չեն ընել:

Ես, գոթազգութար ու իմացայ թաղականութեան ատ քայլի մասին և մինչեւ ներկայ գրութեան հասնելը, արդէն բաւական գործ տեսած կը ըլլայ թաղականութիւնը թշուառ Տարոնցիին տեղ Յիւրապէի համայնակեցեցիին պատերը օրախօսանելու համար:

Ինչ որ ալ ըլլայ, գոնէ հանրային խղճմտանքի գաղափարներն յանձնած կը լրամ գիրենք: Արդէն մէկ-երկու հարուստ մերժեր են առնց ատ ազգագործին մանակցելու, միութարակութեան է ասի, նոր գիծում ընդունող է անսթիւն ու հարուստներն ալ նոյն կերպով թող ընդունին աս հանգանակչները, որոնք խուլ են Հայաստանի լացին առջեւ:

Մեր ժամանակ — աս լաւ գաւ մը անոնց:

Թղթալից

ՍԻ ՓՈՐՇԻ ՓՈՍ ՈՒՐՆԵՆ • ՍԷՋՐ ԿԻՏԵԱՍ

Պ. Սալէ Տէր Ջաքարեան Եւրոպայի 619-650 թիւերուն մէջ, շարունակելով յարձակումը անձիս և վարած ձեռնարկներուս դէմ, ան ներկի սահման

ներքին ալ շատ անդին անցած է ու զիս ստիպած անգամ մ'եւս գալ հրաւիրարկաւ զիմակագործի ընկերները, յայտնելով հայ հասարակութեան բուն իսկ ճշարտութիւնը, շոշափելի հաստատելի իրողութիւններ, իրականութիւն և գործ մէջտեղ հանելով:

Այն հայ ձեռնարկ թշնամիներ ունեցած է նոյնիսկ հայերու մէջ: Կը ցարիմ սակայն որ Լոզանի հայ ձեռնարկը գոնէ բազում ունեցած չէ հանդիպելու մի այնպիսի ինչնամբի, որը իր իրական քիչ թէ շատ արժանիքով, իր անցնալով, իր ներկայովը, իր կրթութեան շտաբովը և մասնաւոր իր անհատականութեամբ պատուաբեր լի նէր թշնամի կոչուելու: Եւ եթէ Շարմուխի ընթերցողները միայն իտարիքները ըլլային, հարկ չպիտի ունենայի ըսելու որ իմ զրպարարիչը խելքի պակասութեան համար Ատարական զրկուած է բնական: Այսօր որ ինքզինքը սահաւակ տարիէ մը ի վեր իր պառնետած է իրբեւ թէ ուսանելու համար, տակաւին չզրտէ թէ ինչ պէտք է ուսանի: մի որ բնական գիտութիւններն են որ զինքը կը հրապարակէ, յաջորդ օրը, երբ կատարի անընթաց մտնեցած է պահ մը բանաստեղծ կարծելով ինքզինքը, գեղեցիկ սպասորութիւններուն հետամուտ է: միւս օրը... բայց որ նոր փափաք և արատազրութեան նոր, զրպարտութիւնն ալ չը մտնալով, ինչպէս է որ համալսարանը մերժեց այդ տեսակ տգէտ մը իրբեւ հասարակ ուսանող ընդունելու:

Երբէք ազիտութիւնը աւելի յաւանտու ոչնչութիւնը աւելի պատասխան և բարոյական սկզբունքներէ զուրկ լինելը աւելի ստորաբարձ եղած չէին: Ասով մէկտեղ անկարելի է լարգարտակ առոր վրայ: Ինչո՞ք չը պիտէ թէ ինչ կ'ընէ կամ թէ որո՞ւ ձեռքը խաղալի կ'զայտէ: Իայց հակառակօրէ մը որ նոյնիսկ արհամարհանքի տեղ արգահատանք կը շարժէ անարժան է հակահակորդ ըստելու:

Եւ ինչ կ'ընէ իրբեւ պատասխան իմ նախորդ գրութեանս ու ինչ նորութիւններ կը բերէ: սօսէն քննեք: ներողութեան կը խնդրեմ ընթերցող հասարակութեան զինքը անձնակալութեան շուրջ գարձող խնդիրներով զբաղեցնելու համար, զիտէ թէ այս պատասխան մըն է միայն:

Կեննեք նախ զրպարտելիս պատասխանը: — կը յայտնէ թէ Հայաբերքին ալ զրկած է իր զրպարտագիրը, աւելի հանդիսաւորապէս ինքզինքին հակասելու համար: Այս կէտը ցոյց կուտայ թէ որքան անգիտակից է իր ըրածներուն և որքան ծիծաղելի երբ կը կարծէ թէ սուտ մը կրկնուելով ճշարտութեան երեւոյթ կ'ըրտանայ: Եթէ իր ըսածները ամբողջ հայ մասնաւոր ալ զրկած ըլլար ինքնինն ստատու ըսելէ պիտի չը զարդէր, քանի որ երեկուան կայ ըսածին այսօր չկայ կ'ընէ: համակրանքի կամ յարգանքի խնդիր չկայ այստեղ, կամ մէկը ճիշտ է կամ միւսը: Աւ այսպէս ներքին մեքած, ցուրտ ինկողի մը պէս, շեղբու կը կառչի ու կը ծանուցանէ թէ Մարտիրոս անունս Պօլի փոխեր եմ եղեր, այն ալ շահադիտական տեսակետով: ինչ որ եթէ պարզ ստուծիւն մը չըլլար իսկ ինքնին բաւական ծիծաղելի է: «Փաստե՛ր կան» եղեր սուտի սոսորակին մէջ, ահա՛ անոնցմէ մէկը:

Այլևս զրպարտութիւնը, հակապիտիւնը, նոյնիսկ խարդախութիւնը, ինչպէս պիտի տեսնենք, հոյա-

թեւ պիտի պարեն պարունի հիւանդագին գրութեան մէջ: Ամբարշու ընդունակ չեմ բայց երկար ամիսներ իմ հակայական (աշխարհը տակն ու վրայ ընելու ընտել միտք ունեցած չեմ) ծրագրերով և ճիգով իտական խօսքերով կրցեր եմ խորհել զինքը: շիտակը չափազանց միամիտ ըլլալը հրապարակաւ կը խոտովանի: Իայց երբ կ'ընէ թէ յեղափոխութեան հասցէին հայհոյանքներ չեմ խնայեր աւելն առթիւ սուկայի կերպով կը ստէ: «Փաստե՛ր կան» և վրաներ, այո՛ բայց... միշտ մութիւն և սուտի սոսորակին մէջ:

Իարձեալ շահադիտական տեսակետով (« չէ գտեր այս տեսակետը) ուսանողական ընկերութեան անգամ գրուել ցանկացեր եմ: սպասելով անկէ հոգայական տեսելութիւններ և վիճակաբարձ օժանդակութիւն: Հասանական է: Գծադրաբար այդ տեսակետը մտքին ներկայացած չէ ժամանակին, ահա ինչու կ'երեւայ թէ շահադանց զգնահատելով գտած մեծ ծանեմ առաւելութիւններս հրաժարեր եմ անգամակցութեան ընկերութեան մը, որը զիս թէեւ գծադրութեան մը ընդունել է, գոհութեամբ ալ չէ որ անսեր է հեռանալս, որովհետեւ... 3-4 ֆրանքի առիտով չեմ վճարեր եզեր: Այսօր շատ պիտի ցաւէի եթէ իրօք անգամ անգամ ըլլայի ընկերութեան մը, որը Պ. Զաքարեան իր ներկայութեամբ կ'ան պատուէ:

Պարտե՛ր իր կատարեալ տգիտութիւնը ցոյց կուտայ ուրանալով որ Պոլսոյ մէջ, մասնաւոր Քերթալի և Իտարի գրի վեր յայնքը ո՛չ թան կը կարողան եղեր ո՛չ ալ Ֆիլիսոս: Շիտակ է որ թաւրիզ և Ատարտան շատ հետու են Պոլսէն, բայց այսքան ալ համարձակութեան տգիտութեան մէջ աններելի է:

Ճիշտութեան միւսնոյն շափը կը յայտնէ սակեւ երբ զպրօցին ծրագրերը իրբեւ թէ քննադատելու կ'ելնէ ուրիշներով լիք կոչուով զայն: Ինչո՞ք չը խնայի թէ այդ ծրագրերը, հայկական մասը զուրս առնելով, իր ապրած երկրին պարտններուն մէջ ի գործ զրուածն է, ու ինք ո՛չ միայն Զուրկերիս պէս մանկավարժ ներկրի մը, այլ ամուսնախտին երկրի մը ծրագրերը քննադատելու անկարող է:

Կ'երեւի թէ Պոսփիստի կոչուելու ալ իր սրբին մեծ ցաւ է եղեր: է՛հ, ինչ ընել, այն համալսարանը, որով զկայեալ քիմիագէտի և գիտութեան տոկոսով զկայականներս ստացած եմ, և որուն գերագոյն ժողովը պաշտօնակալ արտօնած է զիս համալսարանական դասախօսութիւններ ընելու, չնդունելով զինքը նոյնիսկ իրբեւ հասարակ ուսանող: Գծախօսութիւն մ'է այս, բայց իրականութիւն: պէտք է կամայ թէ սկսեմ համակերպել:

Ինչք հիմա յոռաջ ընրուած նորութիւններուն և նաժաններուն: Աստեղ ստալինը, գրուած իմ նախկին տանտիրոջ կողմէն շատ հակիրճ, հետեւաբար շատ ալ թիւրի կերպով, նոյնիսկ իր այդ ձեւին մէջ գովեստ մ'է աւելի չան պարտաւանք մը, քանի որ լսելնայն կ'ընէ թէ իմ ձեռնարկի սիրոյն համար ժընէզի համալսարանական դասախօսութիւններս և անթիւ հեռագրութեան վրայ կատարած անձնակալ աշխատութիւններս, ինչպէս և մասնաւոր դասերս ձգած, Սեբաստացի հայու մը վայել յարատեւութեամբ անյողող կ'երկու տարի սպասեր եմ կատարեալ և փայ-

լուն յաջորդութեանը այս օգտակար ձեռնարկին, Լոզանի սակաւաթիւ հայ ուսանողներու արամադրութեան տակ զենելով ընթերցարարի մը, և մերժեւելով ուսուցչութեան կրկնակի հրաւերներ, ինչպէս և իրբեւ քիմիագէտ ինձ առաջարկուած յոյժ շահաւետ պաշտօն: Եւ ես շատ ուրախ եմ ու գոհ զոնորութեան այդ երկու տարիներուն համար, որ ինքնին շատ ոչինչ բան է այս տեսակ գործի մը յաջողութեանը համար:

Երկրորդ նամակը իրբեւ թէ Լոզանի ուսանողական կոմիտէին ուղղուած է Պ. Զաքարեանին իբր պատասխան առոր հարցերուն: Նախորդ գրութեանս մէջ հրապարակաւ կոչուած ըրած էի Լոզանի ուսանողներուն որ իրենց ստորագրութեան տակ գան ըսեն թէ համաժողով են Պ. Զաքարեանի ըսածներուն թէ ոչ: Եւ ահա այսօր նամակ մը մէջտեղ կը նետուի՝ առանց անուններու: Արդ՝ մինչև որ այդ նամակին ինչնակը կամ հեղինակները իրենց անունն տակ հրապարակ չեն ընեն մեծ և վերջին աստիճան ամօթալի խարդախութիւն մը, կեղծ մը պիտի մնայ այն, քանի որ վաստակաւոր գիտեմ թէ Լոզանի ուսանողական կոմիտէն անունը շարաչար գործածուած է: Ինչ է մութիւն մէջ շարժելու այս քաջութիւնը, ինչո՞ւ այս տեսակ ստորին միջոցներու գիտեմ, ինչո՞ւ այս խիստ տիրու բարքերու ցայտագրութիւնը:

Ինչ կ'ընէ այդ կեղծ նամակը, Ա. Նալբանդեանի զպրօցին անունը լսելու սակայն անոր ուր ըլլալը չըլտան ու աշակերտ և ուսուցիչ չեն տեսներ: Իրաւ է որ հայկազեան վարժարանը Գիւրսային, սրճարաններուն, ինչպէս և հասարակաց պարտէզներու կողմը չէ, ու կարելի է որ այդ նամակը գրողներու քայլերը սովոր չըլտան զէպի մեր կողմը ուղղուելու, բայց պարտն կամ պարտներ իրնորքեմ շնորհ ըրէք, մի վայրկեան ձեզի իմոյ առէք, որքան որ ալ ձեր ազգասիրական զգացումներուն հակառակ լինի, սկսածներս ամուսն մէջ տեսնելու եթէ ո՛չ մեր սեղանի կ'հաստատութեանս միւս աշակերտները գտնէ այն երկու աշակերտները որոնց գոյութիւնը, նոյնիսկ մայիսին, կը ծանուցանէ, ձեր իսկ յօգուածին մէջ, օտար մը: Եւ եթէ կուզէք գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի հայկազեան վարժարանը կամ ինքնին յարմարեալ և թէ քանի՞ աշակերտ ունի, կրնայ գիտնալ, եթէ մի քիչ ազգատեղութիւն ունիք, ի մէջ այլոց, Լոզանի զխաւար գրավաճառին: Թղթամիտակին, կահավաճառին և այլն, ինչպէս և Բրոֆ. Տոկտ. Պետտիլին, որ երեք իսկ եկաւ իր ամսական բժշկական այցելութիւնը կատարելու, կամ այն դեղարանը, ուր մեր աշակերտները տմիսը մի անգամ կը կշտուին: չըսեմ պաշտօնատեղերը, բայց աւելցնեմ նաեւ լուսարարուհին: Այս օտարները ձեզ, հայերուգ, մանրամասն տղեկութիւններ պիտի տան ու պիտի նկարագրեն նոյնիսկ մեր աշակերտները, որոնց հանդէպ այնքան գորգուրանք ցոյց կուտան միշտ: Եթէ գոնէ օտարներու տուած տեղեկութիւններուն վրայ կարողանք գտնել վարժարանը, որ Անթ. Արարտ (Արարտ լուս) անուն տան մէջ կը գտնուի, հոն պիտի տեսնէք գեանալարկը՝ ընդունելութեան սրահը, աշխատութեան սենեակներն ու ճոշարանը, առային յարկը՝ զպրօցական սենեակները, որոնց մէկը որոշեալ

ժամերուն իրբեւ ընթերցարան կը ծառայէ, և ննջաւակ եակները, երկրորդ յարկը՝ ամբողջովին ննջաւակ եակները, իսկ այս ամէնուն վրան ալ ընդարձակ տանիքը, քարէ պարտններով եզրուած, ուր, եթէ լոզրօսանքի ժամանակ կ'կամ էք, հայ տղաքներու խումբ մը կը խաղայ ուրախ զուարթ: Այս ամենն վերջ կը յուսամ թէ ներքին ուրախութիւն մը զգալու ազնուութիւնը կ'ունենաք, իսկ գալով զպրօցիս կատարութեան կերպին, այդ իմ պիտանուրանս է և կրքէք պարտական չեմ ըզգար ինքզինքս ձեզ բացատրութիւն տալու: Իսակաւն է որ ձեռնները իրենք գիտեն թէ ինչ կ'ընենք և ինչպէս կ'ընենք: Իր ժամանակին հայ հասարակութեան առջև կը պարզեմ զպրօցիս ընթացքը: հոս տեղը չէ: Իուք ձեր գործին նայեցէք ու ջանացէք ժամ առաջ համալսարան ընդունուիլ կամ կտրուած քննութիւններու մէջ յաջողիլ: Եւրպայի մէջ ժամանակ չը վատնելն ալ սպասիրութիւն է: Եւ եթէ, հակառակ այս ամէնուն, դարձեալ ձեր ձեռքերով կուրացած աչքերը չը բացուին ու հայ զպրօցը չգտնէք աւելի գէշ ձեզ համար: մեզ համար բաւական և կատարու է երբ Պարսից ծոցն ինչպէս և Մանչեսթըրէն, Բեդրսպուրկէն ինչպէս և Գահիրէն: Թեհրանէն ինչպէս և Մարսիլիայէն եկող ծնողներն ու այցելուները զայն կը գտնեն ու գոհ կը ծնկին, և որոնց վկայութեանը կրնան գիտնալ, ի հարկին, փափաքողները:

(Շարմուխի)

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ . Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Վերջ Թագ. ընտրութեան Թուսմուֆի

Ամսոյս 29ին ըստ կառավարութեան որոշման տեղի ունեցաւ տեղւոյս թաղականի ձգձգուած ընտրութիւնը:

Այժմ ամիսներէ ի վեր տեղւոյս մի քանի բրիտանացիներու և ջնջ աղաներու միջիւ ծագած վէճը պատճառ եղած էր եկեղեցական գործերու մատակարարութիւնը երես: վրայ մնալուն:

Խնդիրը առաջ եկած էր եկեղեցական իրաւունքներուն բաժանումէն:

Երիտասարդները կը պնդէին թէ հայ անհատները առհասարակ իրաւունք ունին քուէարկութեան մասնակցելու և այս հիման վրայ պէտք եղածը չը վլացան պաշտպանելու համար: Իրաւունք մը որ թէ բարոյապէս և թէ նիւթապէս օգտակար պիտի լինէր տեղւոյս հասարակութեան յառաջ գիտութեանը: Իսկ կ'իկնուի դասակարգը կը պնդէր թէ իրենք երբէք իրաւունք չի պիտի տան, ինչ գնով ալ ըլլայ: ամէն միջոցներու պիտի գիտնէին իրենց քաղաքիս յառաջ տանելու համար, գարբիսը, այս բարքիչ էր իրենց բուն ընթացքը արդարացնելու: միշտ կը լսուէր իրենց բերնէն թէ քանի որ կատարութիւնը մեզի հետ է երբէք վիշում չենք ընել:

Յուրիս ամսոյ վերջերը առիթ ունեցանք վայելել Մաշտոց վարդապետի ներկայութիւնը և յարմար առիթ սեպտեմբերի 10-ին երիտասարդներ գիմնազիին վարդապետին և խնդրեցին որ չլլանայ իրեն աստիճանին վայել աջակցութիւն մը տեղւոյս խնդիրները կարգադրելու համար:

Հայր Առաքել առանց առարկութեան ընդունեց խնդիրքը և որոշուեցաւ ունենալ ընդհանուր մտղով մը ուր պէտք էր կարգադրել իրաւունքներու բաժանման խնդիրը. վերջապէս ժողովը ունեցանք առանց հակառակ կողմի ներկայութիւնը վայելելու, միայն զաղթական երիտասարդ մը Պ. Կ. Խոսրովեանը յանձն առած էր պաշտպանել էֆէնտիներու կամքը. այս պարագան մեծ ցաւ չէր պատճառեց մեզի որովհետեւ կային տեղացի երիտասարդներ ալ որ կը պաշտպանէին զաղթականներու իրաւունքը. վերջապէս աչքի առնելու ունեցանք Պուլկարի ուրիշ քաղաքներու խառն ընտրութեան և տեղւոյս հրէայ հասարակութեան կառավարութեանն արտօնուած խառն ընտրութեան եղանակը. և որոշուեցաւ ընտրել յանձնախումբ մը որ առանց կառավարութեան ներկայանալու դիմէ օրինագրքին և տեղեկանայ թէ օրէնքը ի՞նչ կը տրամադրէ օտար եկեղեցիներու պաշտօնեաներու ընտրութեանց նկատմամբ. այս նպատակաւ ընտրուեցան 5 անձինք որոնց կրկնակի ըսուեցաւ որ առանց կառավարութեան դիմելու որինաց տրամադրութիւնը կողմնակի միջոցներով հասկնան. քանի որ ամէն պաշտօնեայ օրէնքը իր քմահաճոյքին համեմատ կը մեկնէ. յանձնախումբի երկու անդամները անտարբեր կը մնան իրենց պաշտօնին, մնացած երեքը, որք են. Կ. Խոսրովեան, Ս. Գասարեան և Մ. Պետելեան կատարեալ պաղարիւնութեամբ կը գիմն կառավարական շրջանակաց և շոջերու քեֆ պատճառելիք պատասխան մը կը տանան: Այս բանը վերջին աստիճան զայրացուց տեղւոյս հետաքրքիր երիտասարդութիւնը որ որոշեց ալ խօսքով չպաշտպանել խնդիրը գիտնալով թէ խօսքը մարդու համար է. նոյնիսկ խորհեցաւ տալ այդպիսիներուն իրենց վայել պատիժը, բայց պարագաները անյարմար գտնելով հրաժարեցաւ իւր այդ մտածումէն և տուաւ արտօնութիւն ըստ իրենց կամքին կատարել ընտրութիւնը համոզում գոյացնելով միանգամայն թէ խնդիրը լոկ գարրիզի խնդիր չէ, այլ պէտք է ունենայ իր թագուն կէտերը որ այսքան ընդդիմութիւն յառաջ բերած էր հասարակութեան օգտակար ձեռք:

նախկին վիճակներու համար: Գծարդագար խնդիրը շատ պարզուեցաւ. մեր ընկերներէն մէկը ամսոյս սկիզբները Ռուսներոյ քանի մը քաղաքները այցելեց. հոն իրեն կը հանդիպինախկին բարեկամ մը և խօսակցութեան միջոցին հարցում կուզէ թէ ի՞նչ եղած է ազայի մը կողմէ իւրացուած եկեղեցապատկան գումարի մը խնդիրը. մեր ընկերը իրեն և թէ տեղեկ խնդիրն կը պատասխանէ թէ ստակները աղքատախնամի կը պատկանէին ոչ թէ եկեղեցւոյ և այսպէսով խնդիրը կրկին անգամ կը բացատրուի իր բարեկամին կողմէն որ կաւելցունէ միանգամայն թէ որոշուած է ժողովուրդէն ծածուկ պահել այսքանը արդէն բաւական էր կը մնար ստուգել թէ յիշուի եղած է այսպիսի պիտոմ մը. տեղեկացանք թէ խնդիրը մի քանիներու ներկայութեամբ կանանչ սեղանի վրայ կարգադրուած էր ի հարկէ ամէն մէկը իրեն բաժինը ունենալով:

Արդ պարտներ ալ մեզ համար անբացատրելի չէ ձեր բռնած ընթացքը և հաւասար յանցաւոր կը գտնենք իւրացողը, կարգադրողները և թագցնողները. ուրեմն կը խնդրենք նորընտիր թագական էֆէնտիներէ որ չը հետեւելով իրենց նախկիններու զեղծումներէ ընթացքին հրապարակեն խնդիրը. այսպէս կարող են ազատիլ պատասխանատուութենէ մը որով իրենց նախորդները կը գատապարտուին իրենց ամօթալի գաղտնապահութեամբ, անոնք միանգամայն պարտին յայտարարել թէ այն ազգային անհատը որ կը հետաքրքրուի տեսնել եկեղեցւոյ հին և նոր հաշիւները ազատ է այս կամ այն պայմանով, փարատելու համար իւր կասկածները:

Հետաքրքիր երեսասարգներ
23 Սեպտ. 1904
Ռուստոֆ
Պատասխանատու
Քերովի Զախան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍՈՒ
«Պէրլինէր Յայթուէկ» թերթը Բեթերապուրկէն կիմանայ թէ Բլէվէն սպաննոյի մեղսակիցներ զտնելու խուզարկութիւնները անհետեւանք եղած են, կը կարծուի թէ Սափօնով ինք միակ գործած է:

Տարի ու կէս առաջ ան ձերբակալուելով Մոսկուայի մէջ արտուներ է Սիպերիոյ Թեմուր քաղաքը. ուսկէ յաջողոր է փախիլ Ասկէ վերջ իբրեւ գործաւոր պը տըտեր ամբողջ Ռուսիա, աշխատեր է երկաթուղիին գծերուն

վրայ առիթ փնտռելով կայսերական թրէնը օդը հանելու համար. Ասոր համար հիմա խիստ միջոցներ ձեռք առնուած են որ երկաթուղիին գծերուն վրայ անծանօթ մարդի շաշխատցեն:

—Վարչավայի քովերը, փոքրիկ քաղաքի մը մէջ, հակահարէական ցոյցեր տեղի ունեցեր են. Հրէական առներու բոլոր սպակիները ցուցարարներու կողմէն շարդու փշուր եղեր է. շատ մը հրէաներ ձեռուեր են. Վերջը հրէաները զինուելով խոտարարները հալածեր են:

—Յարին հրովարտակովը 1887 88 և 89 լուսկաններուն պահեստի զօրքերը: որոնք երեսուրկան ծառայութենէ ազատ արձակուած են:

—Լիմպերկէն Վիէննա կը հեռագրեն թէ Լեհաստանի Լոսպաղաքին մէջ մեծ թուով գործաւորներ, յեղափոխական երգեր երգելով, քայքայ են քաղաքացեալ Եէնօթակիին տան և պատուհաններուն «պակիները շարդու խաղախներ վրայ հասեր են և ընդհարում տեղի ունեցեր է. Աստիկանութիւնը յաջողոր է 510 խորձաւորի շրջապատել և ձերբակալել:

—Սեպտեմբեր 21 Բեթերապուրկ հասեր է երկրորդ զօրաբանակի նոր հրամանատար Գրինպերկ: Քուրօթաթքին շնորհաւորական հեռագիր զարկեր է կրկնակրկի իր ուրախութիւնը յայտնելով:

—Ներքին գործոց նախարարի կարգադրութեամբ այդ վարչութիւնէն արձակուած են Ջիւնովիէվ և Ժիլիւսիլի: Այդ անօրինութիւնը շատ գոհ ձգած է ուսուցիչները:

—Նախարարը իրեն յանձնված վարչութեան Բ. պաշտօնեաները ընդունած առները կրկին խոստացած է որ կառավարութեան մէջ նոր ուղղութիւն պիտի մտցնէ:

Ս. Ի Ս Տ Ր Ի Ս.
Ռուսիայէն 7 ուսուցիչները Ռուսիա փախեր են. Աւստրիական կառավարութիւնը այդ զինուորները նախ ձերբակալեր է, բայց վիճել ազատ արձակեր է:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄ
Թօթիօէն սեպտ. 23ին Բէթերապուրի գործակալութեան կը հաղորդեն հետեւեալը.
Պարզ է թէ անհաւասար կողերով եռանկիւնին, որուն ծայրը թէլիկը կը կազմէ, իսկ հիմքը Մուկտէն, Ծուլէն-չենկ գիւղը, շուտով պատերազմական մեծ գործողութիւններու հիմնավայր

պիտի ըլլայ:
—Նոյն թուականին «Տէլի-Մէլի» կը հաղորդեն թէ գիշերը Բորթ-Լիթուերի ուսուստորմը կրկին փորձ բրած է ճեղքել ճառնացոց պաշարողական շրջութան և փախչիլ, այդ պատճառաւ կատարի ճակատամարտ մը սկսեր է որուն հետեւանքը դեռ յայտնի չէ:

—Ռուս «Թիթ» Վէտօմօստի թերթը կը հաղորդէ թէ չինական կամաւոր զինուորներու հրամանատար կարգուած է ճառնացի մէնթրալ կիլի:

—Ռուսական թերթ մը Մուկտէն հետեւեալ հեռագիրը հրատարակած է.
«Ճառնացիները տեղական չինացիներէն Մանտուրական կամաւորներ անուան տակ, վաշտեր կը կազմակերպեն, և կը զինեն «Միւրի» կոչուած հին հրացաններով և կը զրկեն յարձակումներ գործելու ուսուկան կայաններուն վրայ»:

—«Պայման» թերթը սեպտեմբեր 22ին Թօթիօէն կիմանայ թէ 500 խառնազնեղ կազմուած հեծելախումբ մը Մուկտէնի հիւսիսային կողմը յարձակում գործեր է խաղախներու վաշտի մը վրայ կատարել կուրէ մը վերջը խուսկանները սպաններ են հարիւր շափ խաղախներ և խլեր շատ մը մը ուսեստի և պատերազմական պաշար:

Խուսկանները գերի բռներ են 90 ուսներ և 120 ձի:

Խուսկաններու պետը նամակ մը թղթուցեր է հետեւեալ բովանդակութեամբ.— գերի բռնուած խաղախները իբրեւ փոխարինութիւն պիտի ըլլան մինչեւ օրս Քուրօթաթքին հրամանով հրացանի բռնուած խուսկաններուն:

ԲԱԺԱՆ ԲՐԻՆԲՈՒՆ
Տարին վերջնայու մօտ է և մեր բաժանորդներէն շատերը դեռ իրենց բաժանորդները չեն վճարած:
Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարտք ունին: Ինչպէս կիւրեի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթ տէմբը ձրի կանանք, գրաշարները ու տպարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտիր, այլ օդով կապրինք:
Քիչ մը ազնիւ ըլլալու են մեր ջը վճարող բաժանորդները, մասնաւոր անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին Բերթ չենք զրկեր մարդու: Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական գագացումէն զուրկ չը պիտի ըլլայ:
Խմբագրութիւն

ОТГОВОРНИКЪ
Мурадъ-Враносянъ
Печатница „Взаимность“ Варна